

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2014 թ.

N 525-Ն

ք. Ստեփանակերտ

**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-Ի N 224 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի «Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման կարգը հաստատելու մասին» N 224 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԿՐԱՔԱՆԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման աշխատանքների հետ կապված հարաբերությունները:

2. Օգտակար հանածոների հանքավայրի կամ դրա առանձին տեղամասի (այսուհետ՝ հանքավայր) երկրաբանատնտեսագիտական (արդյունաբերական) գնահատումը (այսուհետ՝ գնահատում) կոնկրետ հանքավայրի արդյունաբերական նշանակության որոշման և դրա սահմաններում պարփակված օգտակար հանածոների պաշարների հաշվարկման համար անհրաժեշտ կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմանն ուղղված դաշտային և (կամ) աշխատանոցային աշխատանքների համալիր է:

3. Հանքավայրի գնահատումը կատարվում է ընդերքօգտագործողի կողմից դրա շահագործման առավել արդյունավետ եղանակների, տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների ընտրության, բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման, կապիտալ ներդրումների, շահագործական ծախսերի, եկամուտների, շահույթի և այլ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսման միջոցով: Նշված խնդիրները լուծվում են հանքավայրի վերաբերյալ գնահատման պահին կուտակված ամբողջ երկրաբանական տեղեկության և հանրապետությունում սոցիալ-տնտեսական արդի պայմանների, շուկայի ընթացիկ վիճակի, գիտության ու տեխնիկայի նվաճումների հաշվառմամբ:

4. Հանքավայրի գնահատումն իրականացվում է ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության (այսուհետ՝ ուսումնասիրություն) և շահագործման համար տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

5. Հանքավայրի գնահատումն ուսումնասիրության արդյունքներով եզրափակում է դրա մանրագնին հետախուզման փուլը և կատարվում է ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

6. Հանքավայրի գնահատումն ընդերքօգտագործողի ցանկությամբ, անարդյունավետ ծախսերի ռիսկը նվազեցնելու նպատակով, կարող է իրականացվել նաև դրա որոնողագնահատման և (կամ) նախնական հետախուզման փուլերում: Այդ աշխատանքները նույնպես կատարվում են տվյալ հանքավայրի ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

7. Շահագործվող հանքավայրի գնահատումն իրականացվում է ընդերքօգտագործողի կողմից դրա արդյունաբերական գնահատականը և կոնդիցիաների պարամետրերը լրահետախուզմամբ և շահագործական հետախուզմամբ համալրված ու ճշգրտված երկրաբանական տեղեկությանը, ինչպես նաև հանրապետության սոցիալ-տնտեսական, բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման և շուկայի արդի պայմաններին, գիտության ու տեխնիկայի

ներկայիս մակարդակին համապատասխանեցնելու նպատակով (այսուհետ՝ վերագնահատում):

8. Լրահետախուզման և շահագործական հետախուզական աշխատանքները շարունակական են և մշտապես ուղեկցում են հանքավայրի շահագործման գործընթացը: Դրանք պետք է նախատեսվեն հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում և իրականացվեն օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

9. Շահագործվող հանքավայրի վերագնահատման արդյունքները ենթակա են պետական ընդերքաբանական փորձաքննության:

10. Շահագործվող հանքավայրում հանքային հումքի կոնդիցիաները և պաշարները ենթակա են վերագնահատման ոչ ուշ, քան յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ